



ԶԱՎԵԼ ԵՍԱՅԱՆ

Երբ այլևս չեն սիրեր

Խրամէթ

Ծննդեան առաւօտն էր, եւ դեռ այգը չծագած եկեղեցիին զանգակները կը ղօղաչէին տօնական օրերու յատուկ ծեփծեփումներով. հայ, մանաւանդ ժողովրդական թաղերու մէջ սկսած էր ոգեւորութիւնը եւ ամէն հասակէ մարդիկ, նոյն իսկ ոմանք հարբուխոտ, ցրտին եւ խոնաւ մթնոլորտին մէջ ձգելով իրենց խոպոտ հագերուն երկարատեւ արձագանգը. կը դիմէին եկեղեցի: Երանիկ հանրմ եւ աղջիկը աւելի, կանուխ, գացեր տեղաւորուեր էին վերնատան առաջին շարքին վրայ եւ հակառակ ցուրտէն տանջուելնուն համբերութեամբ կը սպասէին:

Փոխն ի փոխ մրափելով եւ սթափելով հետեւեցան ժամերգութեանց. «Առաւօտ լուսոյ»ի ժամանակ՝ շարականին պարզ եւ լայն եղանակներէն ու ծնծղաներու գուարթ թափերէն ոգեւորուած ճշմարտապէս զգացին թէ աւետիս մը կը ծածանէր միջոցին մէջ ու իրեն հոգին խառնուեցաւ ընդհանուր փառաբանութեան, բայց հետզհետէ կրկին մտան երկարաձգուող եւ ողբական եղանակներու ազդեցութեան ներքեւ մինչեւ պատարագը:

Եկեղեցին այդ պահուն լեցուած էր արդէն. վերնատան մէջ իրենց ետեւ, նստարաններ գրաւուեր էին մինչեւ յետին շարքերը. պաղ եւ տմոյն լոյս մը, մշուշանման ճերմակութեան պէս կը մաղուէր պատուհաններէն եւ պլպլացող մոմերուն ճանանչերը կը տժգունէին հետզհետէ: Եւփիմէ վերջնականապէս սթափած, ոտքի ելաւ, խաչակնքեց եւ աչքերը յառեց խորանի մեծ ջերմեռանդութեամբ:

Պատարագին ամբողջ տեւողութեանը անոր հոգին խոոված մնաց սրբազան երժշտութենէն եւ այդ հոգեկան դիւրագգածութեամբը խորհեցաւ իր վիճակին եւ նշանաձին վրայ երբեմն պատրաստակամ էր ներելու Խաչիկին եւ վերջնականապէ սկրթնելու անոր գօրեղ բագուկին. երիտասարդ էր, կանանճ-կտրին, աւելի աղեկ չէ՞ր աչք գոցել պգտիկ պակասներու. ծլէին, ծաղկէին, գաւակներու տէր ըլլային... Խեղճը ի՞նչ ըրած էր վերջապէս. ամէն օր ծովին եզերքը արիւն քրտինք կը թափէր. ամօթ չէ՞ր կաղանդին նուէր մը բերած չըլլալուն համար երես դարձնել, քէն ընել: Քանի օր է որ Խաչիկ հասկնալով որ սեւ կատու անցած է մէջերնուն, աչքը երեսնին մնացեր էր. ինչ ընելը չէր գիտեր. սիրտը մեծ, հոգին հպարտ էր, անոր համար բերանը չէր բանար, խօսք չէր ըներ, հետեւաբար չէր գիտեր թէ ինչո՞ւ սրդողած էին իրեն, բայց Եւփիմէ հասկցեր էր որ անոր սրտէն արիւն կերթար կոր:

Իր ժողովրդական խաւերու յատուկ ողջմտութեամբ եւ բարութեամբ յանկարծ մտադրեց նշանաձին սիրտը առնել. երեսին խնդալ. յիշեց Խաչիկին առատաձեռնութիւնները, յիշեց նաեւ իրենց քաշած չքաւորութիւնը. պգտիկուց հայրը կորսնցուցեր էր, տային խեր մը չունէր իրենց, վաստակած քանի մը փարան հազիւ օղիին կը բաւէր, էրիկ մարդու հաց կերած չէին գիշեր, ցորեկ տատելով, խալէմին ծայրովը կը հոգային ամէն բան. իրենց կը վայլէ՞ր որ քիպարի կնիկներու պէս գոհարեղէնի համար խրո ընէին, իրարու սիրտ կոտրէին.

Մատնին ի՞նչ պիտի ընեմ խորհեցաւ հպարտութեամբ ձեռքերուն նայելով որոնք հակառակ շարունակ աշխատած ըլլալուն նուրբ եւ փափուկ էին:

Պատարագորին երկարաձիգ ձայնը պահ մը իր ուշադրութիւնը գրաւեց բոլորովին. «Առէք, կերէք»ի խորհրդովը վերացած քանի մը անգամ խաչակնքեց եւ մինչ տիրացուներու ռնգային ձայները կը փառաբանէին, աչքին ծայրովը տեսաւ մօրը սեւ եւ շոր սիւուէթը որ հակած դեպի ուրիշ կին կը խօսակցեր եռանդով. յանկարծ մտաբերեց անոր զայրոյթները եւ նոր յոյսերը, աչքին ներկայացաւ վարպետին նիհար ու տժգոյն դէմքը եւ անոր աչքերուն անասնական արտայայտութիւնը, իրեն թուեցաւ որ հակառակ իր ամբողջ կորովին իր սիրտը կը գողնային, հեշտագին ու միանգամայն ցաւագին սարսուռ

մը անցաւ հոգիին մէջէն՝ մանաւանդ երբ լսեց թէ վարպետին կնոջը մասին կը խօսակցէին:

Շատ ծանր, այսօրուան վաղուան է եղեր, կ'ըսէր մայրը մասնաւոր եռանդով մը:

Չաւակ ալ շունեցան, մրմնջեց անարիւն կին մը գլուխը ցնցելով:

Աստուած լերան նայեր ձիւնը անոր կէտրէ տուեր է, ըսաւ սգաւոր պառաւ մը, միջամտելով եւ շարք մը անէծքներ թափեց Յակոբճան աղային գլխուն. աղջիկս փորը բերնին յղի էր, ափ մը ջուր ճայիլ՝ որբեւայրի մնաց, փեսան իր քով կ'աշխատէր, ծովերուն եզերքը փտտեցաւ, կէնճ ու կանանչ հողեր առաւ պառկեցաւ. գացի ոտքը ձեռքը ինկայ... սա օրերը անցնին, մէյ մի փուշը ոտքէն ելնայ, աղջիկս նորէն կ'աշխատի, կը վճարէ ըսի. մուտառը. քարի պէս խուլ մնաց... օխ ասրտելու համար չէ, ամա Աստուած ալ իրեն չձգեց.

Է՛յ, ողորմած Աստուած, կը մրմնջէր ուրիշ կին մը բազկատարած, արձականգ ըլլալով սգաւոր պառաւին խօսքերուն: Ամէնքն ալ պահ մը լուռ մնացին: Մէզ եւ տժգոյն, Երանիկ հանրմ գլուխը ցցած կը կենար կարծես իր դառն եւ խոժոռ երևոյթով դէմ դնելով գերագոյն գօրութիւններու:

Պատարագը լրանալէն առաջ աղջկանը նշան ըրաւ եւ մեկնեցաւ. սանդուխներուն վրայ երկու կիները անսահման ցանկութիւններով կը նայէին հարուստ կիներու արդուզարդներուն եւ գոհարեղէններուն. ամէն անգամ որ փետրազարդ գլխարկի մը շուքին ներքեւէն բաղդաւոր կնոջ արհամարհական նայուածքները կը խաչաձեւէին Եւփիմէի սուր նայուածքները, բան մը անոր լաւ տրամադրութիւններէն կը փլէր ու կ'անհետանար: Խաչիկին կոշտ եւ աղքատիկ երևոյթը կը ցցուէր իր դէմ, կարծես իր երջանկութեան ճամբան խափանելով եւ ասիա կը խորհէր մօրը յոյսերուն վրայ. եթէ վարպետին կինը մեռնի՛...

Ան ինտո՛ր նայեցաւ քեզի, աչքերովը պիտի ուտէր կարծես, Եւփիմէ՛, խենդ մի ըլլար, խօսքդ ետ առ, մէջերնիս կոտրած, թափած բան մը չկայ տասիս, եագմաճի կտորին խելք դնելուդ, աչքերդ վեր բարձրացու... տունի հանրմ կ'ըլլաս, Խաչիկի պէս մարդիկը խզմէթկեար կ'ունենաս... մինակ առջի կնկան ըոզակները թեզի տայ նէ կ'օգտէ, ոսկիէ պէպէկ կ'ընէ թեզի... իմ վրաս նայէ օրինակ առ, նագլը

մեծցած էի ամա, էրիկս տեզկեհին առաջքը դրաւ ինձի, ինքն ալ պուճախը անցաւ նստեցաւ, մագս աւել ըրի, քեզի մեծցուցի, օր մը օրանց սրռըս մարդ չիմացաւ, ամա քաշածս ես ու միայն տէրը գիտէ... սօն փուշմանլըք փարա էթմէգ...

Փողոցը ցուրտ էր, բայց արեւը կը ծագէր ահա՝ սառուցիկ եղեամին բիւրեղային փոշին փայլեցնելով ամէն կողմ, խումբ խումբ, մեծ մասով կիներ դէպի իրենց տուները կը շտապէին կիրակնօրեայ հագուստներով զարդարուած: Երանիկ հանրմ, աղջիկը առաջքը ձգած, գլուխը բարձր, աչքերը խոժոռ կը քալէր անշշուկ. խնամքով հագուած էին երկուքն ալ եւ թէւ մօրը սեգ կեցուածքը ակնածանք կը ներշնչէր, դարձեա՛լ մարդոց աչքերը հաճոյքով կը դանդաղէին Եւփիմէի գեղեցկութեան վրայ. շուկայէն անցած աստենին մօրը նայուածքը աւելի խոժոռեցաւ. կրպակներու առաջ աթոռակներու վրայ նստած մարդիկ, մեծ մասով եագմաճի, ցած ձայնով կը խօսակցէին. երբեմն վանատողի մը անակնկալ ձայնը կը բարձրանար երկդիմի գովասանքներով ծախսած ապրանքին վրայ ու թէւ ամէնքն ալ կը հասկնային որ այդ գովքերէն մաս մը բաժին կ'իյնար անցնող գեղեցիկ աղջկան, բայց ոչ ոք կը համարձակէր խնդալ կամ կատարել, որովհետեւ թաղեցի էին անոնք:

Հանդիպեցան Մարտիկ տայիին եւ երկու դրացիներու, բայց իրարու երես անգամ չնայեցան, որովհետեւ անպատշաճ էր այդ վայրին մէջ զիրար բարեւել, նոյն իսկ ճանչնալ ձեւացնել: Անցան գինետուններուն փողոցէն ուր Եւփիմէ չկրցաւ ինքզինքը զսպել ու քովընտի նայուածներ ուղղեց կրպակներու խորը եւ վերջապէս մտան իրենց դրացի փողոցները:

Մինչեւ որ տուն հասան՝ Եւփիմէի դէմքին վրայէն մարեր անցեր էր քաղցրութեան եւ բարութեան հետքերն իսկ. վայելքի անգուպ ծարաւ մը կը տոչորէր զինքը. տեսած հարուստ կիներուն մուշտակները եւ փետուրները կը պարէին իր աչքերուն առաջքը, բայց մանաւանդ խարագանուած կը զգար ինքզինքը անոնց նայուածներէն, որոնց անտարբերութիւնը նախատելի կը թուէր իրեն, հագուիլ՝ սրքուիլ ու երեսալ անոնց՝ իր գեղեցկութեան բոլոր փառքին մէջ, անխախտ նպատակ մը թուեցաւ իրեն: Այս մտածումներով հագուստը փոխելու զբաղած էր երբ դուռը զարնուեցան. կրկին չիփակին կոնակները կոճկեց եւ փութաց դուռը բանալու եւ վարպետը կանգնած գտաւ իր դէմը:

Յակոբճան աղան նոր ածիլուած, փեսութեան սեւ հագուստները հագած, դանդաղ շարժումներով վեր ելաւ. զգալի կերպով շուարած էր ու նոյն իսկ բարեւելու կը վարանէր. բայց երբ Երանիկ հանրմ իր փոթոտուած եւ ուռած դէմքը ժպիտով մը ծամածոած յառաջացաւ դէպի անոր, ոտքի ելաւ եւ մեքենական ձայնով մը մըմնջեց:

Շնորհաւոր ծնունդ եւ աստուածայայտութիւն...

Երկու կողմէն գաղտնի դիտաւորութիւններ ունելով կեղծ ու բռնագբօսիկ ձեւ մը ունէին. մէկէն ի մէկ անհետացեր էր վարպետին արհամարհական ընտանութիւնը որ ունէր իր բոլոր բանորոտիւններուն հանդէպ. աննշան խօսքեր կը փոխանակէին իրարու հետ ընդհատուած լռութիւններով եւ գաղտնագողի գիրար դիտելով՝ երբ Եւփիմէ սրահ մտաւ անուշի ափսէն ձեռքը: Թեւերը բացած, մատները անցուցած ափսէին բռնօղակներուն, մինչ մէկ եզերք կուրծքին վրայ կը սեղմուէր, անիկա յառաջացաւ եւ այնքա՛ն հոգին փոթորկուած էր հակասական զգացումներով որ կը դողար եւ գաւաթներն ու անուշի ամանը կը ցնցուէին թեթեւօրէն:

Անուշ հրամեցիք, ըսաւ Երանիկ հանրմ խոնարհութիւն մը ընելով:

Շնորհակալ եմ, պատասխանեց Յակոբճան աղա նորք կտաւէ թաշկինակով բերանը սրբելով:

Ակնթարթի մը մէջ Եւփիմէ դիտեց անոր ձիւնափայլ եւ օսլայած շապիկը, փայլուն կոճակները եր մետաքսաւետ փողկապը. մէկ կողմը սանտրած անփայլ մագերէն անուշահոտութիւն մը կ'արտաշընչուէր ու կը ծփծփար. Եւփիմէ պահ մը մոռցաւ անոր տգեղութիւնը, ճղճիւնութիւնը. իրեն թուեցաւ որ ճշմարիտ սէրը, օսլայած եւ սպիտակ շապիկի կը ներքեւ կը դնէ միայն իր բոյնը, իրեն թուեցան որ այսօրուրնէ արդէն իր չքաւոր աղջկան մոայլ ու տրտում ճակատագիրը կը մտնէր նոր փուլի մը մէջ: Երբ անուշին ափսէն մատանը տեղաւորելէ ետքը եկաւ նստեցաւ մօրը քով, Յակոբճան աղա իր նայուածքը յառեց իրեն. բայց ահա ոտքի ելաւ, մնար բարովը ըսաւ եւ մեկնեցաւ. մայր ու աղջիկ պահ մը մնացին բակը:

Աղայի պէս շնորհքով մարդ է, ըսաւ Երանիկ հանրմ:

Եւփիմէ խոր հառաչանք մը արձակեց ու վեր ելաւ, բնագոյաբար պատուհանին մօտեցաւ եւ տեսաւ որ դրացի տուներէն կանացի գլուխներ դեռ զարմացումով կը նայէին վարպետին ետեւէն:

Յանկարծ հոգիի խորէն հզօր ընթաստութիւն մը ժայթքեցաւ իր կացութեան, դրացիներուն շարամտութեան, Խաչիկին իրեն ընծայած չքաւոր կեանքին դէմ:

Աչքն դիմացը մինչեւ հեռուները պզտիկ եւ խարխուլ փայտաշէն տուներ կը շարուէին քով քովի, կոնակ կոնակի. ձկնորսի, ձկնավաճառի կամ եագմաճիի տնակներ էին ամէնքն ալ, ձմեռնային այս ցուրտ եւ արեւոտ օրուան մէջ անոնք կարծես կը յայտնէին իրենց բոլոր քստմնելի թշուառութիւնը. տուներ չէին ատոնք, այլ մէկ մէկ դժոխքներ, էրիկ մարդիկ, ծովին եզերքը աշխատող մարդիկ, տաժանելիօրէն պարտասած ամէն իրիկուն գինետուն կը վազէին կագոյրութելու յոյսով. կնիկներնին դժգոհ եւ պատրաստ տրտռալու. գաւակներնին լալկան, գունատ, պահանջող. ո՞վ ծայրը ծայրին կրնար բերել. էրիկ մարդիկ ալ յանցանք չունէին. անոնք ճակատագիր մը կը ծանրանար ամէնուն վրայ. երբ տանը պէտք եղած բաները մտքերնին բերէին կը շարուէին. ո՞րը առնէին, ո՞րը վաղուան ձգէին. ամէնէն կարճը բնաւ չմտածելն էր ու մոռնալու, երբեք չսթափելու համար՝ մինչ առաւօտէն մինչեւ իրիկուն կ'աշխատէին շարաշար, իրիկունները կ'երթային թաղուիլ գինետունին մթնոլորտին մէջ. տուներնուն մէջ կնիկները կ'աշխատէին ինչքան որ կրնային, տղաքը, կը մեծցնէին գէշ աղէկ, օր մը կուշտ, օր մը անօթի, վրանին կոկոկ, տակը հինուկ, կը բաւէր որ ձայներնին մարդ չիմանար, սրտերնին դուրս չելլար:

Կիները ընդհանրապէս չքաւորութիւնը ամօթ կը համարէին ու կը ջանային գայն պարտկել, միւս կողմէ կը թշնամանային իրենց էրիկ մարդոց դէմ. որոնք գրեթէ չէին օժանդակել իրենց. շաբթէ շաբաթ, գինով պիտի ըլլային որ ձեռքերնուն քանի մը փարա փրցուէր, մնացածը կ'երթար գինետուն եւ կեանքը կը քաշքշուէր քէներով, սրտմտութիւններով դառնացած, մէկ կողմէ արժանապատուութեան հոգերով բարդացած, իսկ միւս կողմէ ակամայ կոպտութիւններով բրտացած: Ու ամէնքն ալ կ'ապրէին կարծես մութի մէջ խարխափելով, ամէն մէկը անձկագին ցանկալով քիչ մը հանգիստ, քիչ մը մարդավայել կեանք, ամենադոյզն սփոփանք ու քաղցրութիւն:

Եւփիմէ կարծես որ պայծառատեսութեան մը թոպէին կը տեսնար այն կեանքը որ պիտի ապրէր Խաչիկին հետ. աչքերը գոցեց այդ մղձաւանջը շտեմնելու համար եւ իրեն թուեցաւ որ Յակոբճան աղա մեղմօրէն զինքը կը հեռացնէ այդ դժոխային ոլորտէն. ետեւ դարձաւ, զգալով մօրը ներկայութիւնը եւ երբ մայր ու աղջիկ իրարու նայեցան

Աղայի պէս մարդ է, կրկնեց Երանիկ հանրմ խոհուն դէմքով:

Խըսմէքս որն է նէ ան կ'ըլլայ, պատասխանեց Եւփիմէ, խռոված՝ բայց գրեթէ համակերպած: